ՀԱՅ ԿՆՈՋ ԴԵՐԸ ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Կ. Մ.

Հայ կինը հայոց պատմության դժվարին ու ճակատագրական պահերին անմասն չի մնացել մեր գոյապայքարից, որը վկայում է հայուհու խիզախության, քաջության, հերոսության և նպատակասլացության մասին: Նա միշտ մեծարվել է, համարվել սրբություն, եղել առաքինի, ազնիվ ու համբերատար: Հայը կնոջ նկատմամբ միշտ մեծահարգ է եղել, սրբացրել ու պաշտել է մայրերին: Շատ հայուհիներ ֆիդայիների հետ կողք կողքի պայքարել են թշնամու դեմ, արհավիրքի ժամին դարձել քաջ զինվոր և կյանքի գնով պաշտպանել են իրենց բույնն ու ձագուկներին:

XIX դարի վերջին քառորդին, երբ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Մ. Խրիմյանի, Րաֆֆու, Մ. Փորթուգալյանի և այլոց հայրենասիրական գաղափարների ազդեցության ներքո պայքարի դուրս եկան նաև հայ կանայք. գործունեություն ծավալեցին «Ազգանվեր հայուհեաց Միություն», «Միացյալ ընկերությունք Հայոց», «Դպրոցասեր տիկնանց ընկերություն» կազմակերպությունները: Դարավոր ընդմիջումից հետո ազատ ապրելու ծլարձակած սերմերն իրենց երկար սպասեցնել չտվեցին. հայ կնոջ սխրանքներ արձանագրվեցին Սասունի, Զեյթունի, Վանի և այլ հերոսամարտերի ընթացքում: Շատ կին հայդուկներ իրենց հերոսությամբ չէին զիջում տղամարդկանց: Անգամ եթե կռվի դաշտում հայ կնոջ մասնակցությունը համեմատաբար սահմանափակ է եղել, ապա թիկունքում՝ անհամեմատ նշանակալի. նա հսկել է հայդուկի թաքստոցը, անհրաժեշտ տեղեկություններ, հաց ու ջուր հասցրել, վիրավորների վերքերն է բուժել և գաղտնի նամակներ տեղ հասցրել: Հայ կինը որդուն պատգամում էր քաջ լինել, անգամ սպառնում էր. «Հարամ կ՝անեմ տուած կաթս, թէ որ իյնաս թուրքերու ձեռքը»[1]: Սրանք, հիրավի, մայրերի արտաբերած՝ մեծ խորհուրդ բովանդակող անանց ու խիստ խոսքեր են: Նշենք, որ հայդուկային կռիվներին հայ կանանց մասնակցությունը հայդուկային կանոններով ընդունված չի եղել, հայ տղամարդիկ դա համարել են անթույլատրելի: Իրականում հայ կնոջ մասնակցությունը մշտապես բարձր է գնահատվել, սակայն վեհանձն հայ տղամարդը թույլատրելի չէր համարում վտանգի ենթարկել իր օջախի պահապանին. «Եւ ինչու՞ չէ, առաւելութիւն մը մեր յեղափոխական շարժման, որուն

[1] **Դարբինեան Վ.,** *Կին ազատամարտիկներ (Ասպար, փետրուար, թիւ 2, 1993, էջ 3):*

նուիրումով կը մասնակցէր հայ կինն ալ, Սօսէի եւ Շաքէի տիպարներ տալով Հայոց արիւնալի ազատամարտին»[2], - գրում է Ավոն: Ստեղծված ավանդույթն ու չգրված, սակայն սրբորեն պահպանվող կանոնները չխախտելու նպատակով հայ կանայք կռիվներին հաճախ մասնակցում էին տղամարդու ծպտյալ հագուստով:

Երկար փնտրեցինք, սակայն պարզվեց, որ կին հայդուկների մասին թե՛ հուշագրություններում, թե՛ արխիվային փաստաթղթերում և թե՛ մասնագիտական գրականության մեջ տեղեկությունները շատ չեն: Հայ հայդուկային պայքարի հայտնի դեմքերից է եղել Աննա Մայրիկը՝ Խուլբի շրջանի Ահարոնք գյուղի հեղափոխական ոգին: Նա Սասնո լեռնաշխարհի այն խիզախ կանանցից էր, որն իր ողջ կյանքը նվիրաբերեց ժողովրդին ու հեղափոխությանը[3]: Կին, որն իր ազդեցությունն ուներ լեռնաշխարհի բնակչության վրա, և որին հաշվի էին առնում ոչ միայն հայ իշխաններն ու քուրդ աշիրեթապետերը, այլև շրջանի թուրք կառավարիչները: Ժամանակակիցների տեղեկացմամբ 1875-1915 թթ. ընթացքում Աննա Մայրիկն հարաբերվում էր Տարոնի բոլոր վանահայրերի, աշիրեթապետերի և թուրք կառավարիչների հետ: Աննան իր զորավոր նկարագրով, համարձակախոսությամբ և խելքով գրավել էր բոլորի ուշադրությունը: Հերոսուհու իսկական տիպար էր նա: 1880-1890-ական թթ. բարենորոգումների հարցի շուրջ հաճախ քննարկումներ ու վեճեր է ունեցել Վարդան վարդապետի, Մ. Տամատյանի, հոգևոր առաջնորդ Ն. Խարախանյանի և նշանավոր այլ այրերի հետ: 1880 թ. հայերը հրաժարվում են քուրդ աղային վճարել «10 փարա» կոչվող հակաօրինական տուրքը, որի համար Միրզա աղան խաբեությամբ սպանում է Ահարոնքի իշխան Գրգոյին: Աննա Մայրիկի կոչով և գլխա-վորությամբ ոտքի ելած ահարոնքցիները հարձակվում են Միրզա աղայի տան վրա՝ այրելով և հողին հավասարեցնելով այն: Թեև Միրզա աղան, խույս տալով հայերի վրեժխնդրությունից, փախել էր լեռները, սակայն հայերի բարձրացրած աղմուկն ու ըմբոստությունն այնքան ուժեղ ու ազդու էին, որ թուրքական իշխանություններն ստիպված նրան բանտարկում և կախաղան են հանում: Այս դեպքերից հետո Աննան դառնում է պատմական անձնավորություն, նրա մասին տարբեր պատմություններ են շրջանառվում և նույնիսկ երգեր հյուսվում:

Թուրքական բարենորոգումները անհասկանալի էին Աննա Մայրիկի համար: Նա պահանջում էր, որ ինչպես քրդերն ու թուրքերը, այնպես

---

[2] Յեղափոխական ալպում, Պէյրութ, 1965, էջ 40:

[3] Այստեղ «հեղափոխություն» բառն օգտագործվում է ազգային-ազատագրական պայքարի իմաստով:

էլ հայերը ինքնավարություն ունենան. «Ինչպէս քիւրտերը եւ թուրքերը Պէկլրկ ունին, հայերն ալ քաղաք մը, լեռնամաս մը պէտք է գրաւեն եւ իրենց իշխանութիւնը հիմնեն... Աննա Մայրիկի պահանջը անկախութեան պահանջն էր...»[4], - գրում է Կ. Սասունին: Նա առաջարկում էր ստեղծել ազատված մի փոքրիկ տարածք, թեկուզ Սասունի շրջանում, որն անկախ կլիներ թուրք-քրդական իշխանությունից[5]: Սակայն շատերն Աննա Մայրիկի անկախության ու ազատության պահանջները չէին ըմբռնում: Լեգենդար այդ կնոջը թուրքերը ողջակիզեցին 1915 թ. Տեր Զորում՝ ի թիվս այլ աքսորյալների[6]:

Նշենք, որ հայդուկային պայքարին մասնակցած հայուհիների մի մասի վերաբերյալ մեզ որոշ տեղեկություններ այնուամենայնիվ հասել են, սակայն շատերի դեպքում հայտնի են սոսկ նրանց անունները և գործելու վայրերը: Այսպես՝ Սարգիս Կուկունյանի խմբում կռվել է հերոսուհի Մաքոն, Քյոփրի Քյոյում երկար տարիներ գործող Գրիգոր Տեր-Մկրտչյանի հայդուկային խմբում կռվել է Մարիամ Մակարյանը, որը հայտնի էր Մարո անունով, Մարզվանում հայտնի ֆիդայուհի էր Մարինոսը, որը գործել է Շմավոնի հետ[7], Գևորգ Չաուշի խմբում կռվել և 1905 թ. զոհվել է Խարս գյուղից Զարուհին (Զրրե), կին հայդուկներից էր նաև Ալվառինջ գյուղից Խանիկը: Հայտնի հայդուկ էր Ազապին, որը քաջասիրտ Տուրբախի կինն էր: «Ազապի, - նկարագրում էր նրան ժամանակակիցը, - յեղափոխական խառնուածքով նուիրեալ հայուհի մըն էր...իր արիութեամբ եւ հայրենասիրութեամբ արժանի զոյգն էր Տուրբախին: Ան իր ամուսնոյն պէս զէնքի սիրահար, գիտէր նաև գործածել զայն յարմար վայրկեաններուն»[8]:

---

[4] **Սասունի Կ.**, *Աննա Մայրիկը (Հայրենիք, 1953, թիւ 11, էջ 8-9):*

[5] *Նույն տեղում, էջ 9:*

[6] *Տեր Զոր անապատում, ուր հարյուր հազարավոր անմեղ հայեր գտան իրենց գերեզմանը, 1915 թ. մայիսի 12-ին իր մահկանացուն կնքեց Աննա Մայրիկը: Նրա աչքի առաջ գազանաբար մորթում են 6 երեխաներին: Իսկ Արշալույսին, որը թուրք ոստիկանի հրամանով նետվել էր Եփրատը, մի արաբուհի փրկում է: Ավելի ուշ քեռիները երեխային գտնում և տանում են Բեյրութ:*

[7] **Ս. Սապպահ-Գիլեան,** *Փոքր-Հայքի Յիշատակներ, մասն Առաջին, Չիկագո, 1917, էջ 129-130:*

[8] *Յեղափոխական ալպում, Տուրբախ (Յարութիւն Այվազեան), էջ 317:*

Անզուգական կերպար էր Սոսեն՝ Սոսե Մայրիկը[9] *(Աղբյուր Սոսե, 1868/9-1953 թթ.)՝ Աղբյուր Սերոբի կինը, որն իր տիպարով և սերունդներին կտակած պատգամներով մեր ազգային ինքնության և հպարտության աղբյուրը դարձավ: Սոսեն արդեն լիովին պատրաստ էր ֆիդայական կյանքին, երբ 1895 թ. Սերոբը վերադարձավ պանդխտությունից և հայ հեղափոխականի «Տղա՛ք, առանց հացի մնացէք, առանց զէնքի մի մնաք» կոչ-հորդորով պայքարի դրոշը պարզեց ողջ շրջակա տարածքներում: Հայդուկային խմբում կնոջ առկայությունը բացառող չգրված, սակայն սրբորեն պահպանվող կարգը այս դեպքում շրջանցվեց, քանի որ Սերոբին և նրա ընտանիքին անընդհատ հետապնդում էին թուրքերը, և նրանց կյանքը պահպանելու համար Սերոբն ստիպված էր Սոսեին իր հետ տանել Սասունի լեռները. «Սասունի ֆետայիներու փաղանգը գուրգուրանքով ընդունեց զինքը որպէս պարագլուխ»*[10]*,- գրում է Ավոն: Ամուսնու, հրամանատարի և անվեհեր հայդուկապետի կողքին ազատասեր հայուհին կարողացավ դիմակայել բոլոր դժվարություններին և փառքի արժանի էջեր գրեց հայ ֆիդայական շարժման պատմության մատյանում*[11]*:*

Աչքի ընկնող կին հերոսուհիներից է եղել Մոկունք գյուղից Եսթերը, որը քարոզում էր ոտքի ելնել թուրքի ու քրդի դեմ: Նա հանդգնորեն հրապուրում էր քուրդ աղաներին, և կամ ինքը կամ էլ իրենց ցեղակիցների ձեռքով սպանել տալիս նրանց[12]*: Հայտնի ֆիդայուհի էր Մոկունք*

---

[9] *Ծնվել է Սասունում՝ Նեմրութ լեռան փեշերին գտնվող Թեղուտ գյուղում, բազմանդամ ընտանիքի տեր Մարգար Դրո-Աստանտուրի հարկի տակ: Հազիվ 13 տարեկան էր, երբ սասունցի հայերի ավանդության համաձայն՝ ծնողները ցանկանում են ամուսնացնել Սոսեին: Սակայն բարձրահասակ և գեղադեմ Սոսեն ըմբոստացման իր առաջին և բախտորոշ քայլն է կատարում, երբ ծնողների առաջարկած թեկնածուներին մերժելով՝ որոշում է կյանքը կապել Խչենց Սերոբի հետ, որի անձն ու հայրենասիրությունը հեղափոխական տրամադրություններ ունեցող հայուհու համար մինչ այդ արդեն ներշնչման աղբյուր էին դարձել: Այդ տարիները քրդերի և թուրքերի անիրավությունների ու շահատակությունների դեմ հայկական ըմբոստացման առաջին բռնկումների, ինչպես նաև ապրուստի ապահովման դժվարին պայմանների հաղթահարման համար նաև պանդխտության մեկնելու ժամանակաշրջան էր: 1890-ականների սկզբին կնոջն ու անդրանիկ զավակին՝ Հակոբին թողած, Սերոբը մեկնեց պանդխտության: Ընտանեկան օջախի պաշտպանության հոգսը, անհրաժեշտության դեպքում նաև զենքով քրդական ամենօրյա գողությունների ու թալանի դեմ պայքարը Սոսեի մեջ կոփեցին դիմադրողականության ոգի:*

[10] Աւօ, *Սօսէ Մայրիկ (Յեղափոխական ալպոմ, 1965, էջ 38):*

[11] *Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի դյուցազնուհին՝ Աղբյուր Սոսեն, վախճանվեց Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքում:*

[12] *ՀԱԱ, Արտասահմանից ստացված վավերագրական նյութերի հավաքածու, ֆ. 420, գ. 16, 8, թ. 23:*

գյուղից Մոկունաց (Միրզոյան) Լուսոն, Քեռի Բարսեղի խմբում կռված Յրոնք գյուղից Շուշանիկը (Յրոնքի Շուշան)[13] և այլք:

Հարկ է նշել, որ կին հայդուկները մեծ դեր են ունեցել նաև զենք տեղափոխելու գործում: Օրինակ՝ աննկուն զինատար էր Մարո Ղարաքեշիշյանը՝ Սնքարեցի Սաքոյի կինը: Այսօր քչերին հայտնի այդ հերոսուհու շնորհիվ բազմիցս զենք ու զինամթերք է փոխադրվել Արաքսից այն կողմ: Նկատի ունենալով նրա հերոսական կերպարը՝ կարող ենք ասել, որ միայն Մարոյի նման նվիրյալները կարող էին Ռուսաստանից և Միջին Ասիայից այդքան մեծ քանակի զենք տեղափոխել հենց իրենց՝ ռուսների միջոցով և այն ծառայեցնել ազգային-ազատագրական պայքարի սուրբ գործին: Երբ Մահկանաբերդի արծիվը՝ Սնքարեցի Սաքոն, աշխուժորեն զբաղվում էր զենք հայթայթելու և դեպի Ավետյաց երկիր տեղափոխելու բարդ ու վտանգավոր գործով, հանդիպում էր շատ շատերի, դիմավորում էր բազմաթիվ զինատար խմբերի, իսկ նրան անհրաժեշտ տեղեկությունները հասնում էին Մարո Ղարաքեշիշյանի միջոցով: Եղավ ժամանակահատված, երբ զենք ու զինամթերք հայթայթող և ազգային-ազատագրական պայքարի ազնիվ ու անաղարտ զինվոր Մարոյի «մատը խառն էր ամեն ինչում»[14]:

Բիթլիսցի հարուստ ընտանիքի զավակ էր Շողերը, որի առաքելությունն ազգի ազատագրության սուրբ գործին զինվորագրվելն էր: Բիթլիսցի քաջ հայդուկ Մուշեղի հետ ամուսնանալուց հետո ավելի ոգևորված էր գործում: Հայ մատնիչ Խաչոյին սպանած Մուշեղի մասին տեղեկություն ստանալու համար ոստիկանները Շողերին ծեծում են, սակայն ոչինչ չկարողանալով կորզել նրանից՝ բանտարկում են: Անսասան Շողերը, ժամանակակցի վկայությամբ, որպես «...էգ առիւծի մը խրոխտ կեցուածքով» քաջաբար պատասխանում էր. «Եթէ ֆէտային կը փնտռեք, ան, մատնիչ Խաչօն սպաննելով փախաւ...»[15]:

Ազատագրական պայքարում աչքի է ընկել նաև կին զինատար հայդուկ Ծաղիկը, որը զինակցել է Դերիկի վանքի հայդուկների հետ, մասնակցել է նաև Դերիկի 1894 թ. ինքնապաշտպանական կռիվներին և զենքի փոխադրմանը: Զենքի փոխադրման գործում մեծ դեր է խաղացել Ուզունլուծի (Յոզկաթ) հերոսուհի Գոհարիկ Մարգարյանը: 1890-1908 թթ. Գոհարիկն ամենատարբեր միջոցներով և մեթոդներով զենք ու զինամթերք է տեղափոխել Արևմտյան Հայաստան՝ անգամ ջահերի մեջ թաքցն-

---

[13] Նույն տեղում:

[14] **Բեգլարյան Ի.**, *Մահկանաբերդի արծիվը. Սնքարեցի Սաքո, Ե., 2010, էջ 40, 180, 250:*

[15] **Արշակ,** *Հայ յեղափոխութեան արշալոյսի հսկաներէն, Պիթլիսցի Մուշեղ, Կ. Պոլիս, 1919, էջ 19:*

ելով դրանք: Ի դեպ, այդ ջահ-թաքստոցներից մեկը պահպանվել է և այժմ Երևանի Զորավար Անդրանիկի անունը կրող ֆիդայական շարժման թանգարանում է:

Գևորգ Չավուշի զինակիցներից է եղել կին հայդուկ Եղսոն: Հայտնի են եղել նաև Հայո-Հայաստանը, Սաթենիկ Մատինյանը (Ծաղիկ), Սաթո Օհանջանյանը, Սատան Սիմեյանը, Գայլ Շահենը, Խազալը, Մավին, Աղավնի Վարպետյանը, Սրբոն, Սևոն, Իսմոն և ուրիշներ[16], որոնց գործունեության մասին, ցավոք, դարձյալ քիչ բան է մեզ հայտնի: Տարբեր աղբյուրներում հիշատակվում են նաև ֆիդայուհիներ Խաթուն Գոնտրաջյանի, Կոբեցի Շուշանի, Մարիամ Չիլինգարյանի, Խանում Քեթենջյանի, Ազնիվ Պուճաքյանի անունները: Փոքր Հայքի ֆիդայուհիներից և Արամի մտերիմ գործընկերներից էր Սեբաստիայի Թոտորակ գյուղացի Էլմաս Դարբինյանը (Մալեմեզյան), որին կոչում էին «Հօրքուր». «Հնչակեան բոլոր խմբապետները գիտէին թե ով է Հօրքուրը և ինչ է անոր դերը...»,- փաստագրում է ժամանակակիցը[17]:

Մալաթիայի գավառում Արիֆ բեյի գազանությունների դեմ պայքարում աչքի էր ընկել ֆիդայուհի Վարդուհին: Երբ մի անգամ Արիֆ բեյն իր խմբով գալիս է Մալաթիայի գավառ և տեսնում գեղեցկուհի Վարդուհուն՝ առևանգում է: Սակայն վերջինս կարողանում է ընթացքի ժամանակ ձիու վրայից թռչել և փախչել: Այնուհետև, խուսափելով բեյի հետապընդումներից, եղբոր՝ Պետոյի հետ փախչում է սարը, դառնում հայդուկ, ստեղծում իր խումբն ու վրեժ լուծում[18]:

1913-1914 թթ. տարածված էր ֆիդայուհի Լոլա Սասունի անունն ու փառքը: Հայտնի է, որ նա ամերիկյան քոլեջի շրջանավարտ էր: 1913-1914 թթ. մասնակցել է Սասունի, Էրզրումի հայդուկային շարժումներին, իսկ 1918 թ.՝ Սարդարապատի, Աշտարակի, Եղվարդի կռիվներին: Նշենք նաև 1915-1916 թթ. Ուրֆայի, Շատախի, Մուսա լեռան, Վանի և մյուս ինքնապաշտպանական հերոսամարտերի մասնակից հերոս հայուհիներին, որոնցից շատերի անուններն ու ինքնությունը, ցավոք, անհայտ են այսօր:

Այդ խոնարհ ու անծանոթ հերոսուհիները, որոնք թե՛ մարտի դաշտում, թե՛ թիկունքում պայքարել են մեր ժողովրդի ազատագրության և հոգևոր ու մտավոր զարգացման համար, հաճախ շեղվել են հայ հասարակության մեջ ընդունված նորմերից ու խոր արմատներ ձգած սովորույթներից, զատվել հայ կնոջ ավանդական և նահապետական

---

[16] **Բեգլարյան Ի.**, *Հայդուկներ, Ե., 2010, էջ 384:*

[17] **Սիրվարդ,** *Արամ Աչրգպաշեան (Հերոս Փոքր Հայքի), Փրովիտէնս, 1957, էջ 115:*

[18] **Ալպոյաճեան Ա.,** *Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Պէյրութ, 1961, էջ 866:*

կերպարից՝ ի շահ հայրենիքի ու սեփական ժողովրդի լուսավոր ապագայի[19]:

РОЛЬ АРМЯНСКОЙ ЖЕНЩИНЫ В ГАЙДУКСКОЙ БОРЬБЕ

АРАКЕЛЯН К. М.

Резюме

В конце XIX в. в национально-освободительном движении и гайдукской борьбе значительную роль сыграли также армянские женщины. Женщины-гайдуки так же, как и мужчины-фидаи, посвятили жизнь борьбе за свободу родного народа, доказав свою готовность наравне с мужчины-фидаи, посвятили жизнь борьбе за свободу родного народа, доказав свою готовность наравне с мужчинами погибнуть за свободу, честь и достоинство.

Их героизм послужил примером для будущих поколений, в частности, для женщин, участвовавших в Арцахской войне и отстоявших свободу Арцаха.

THE ARMENIAN WOMEN'S ROLE IN THE HAIDUK STRUGGLE

K. ARAKELYAN

Abstract

During the national liberation movement and the hajduk struggle at the end of the XIX century a significant role was played by the Armenian women, which appeared to be the legacy of the Armenian woman's heroic character throughout the centuries-old history of Armenia.

The Armenian hajduk women devoted their lives to the sacred struggle for their nation's freedom just like the fidayi men. Those heroines' actions proved to the world their readiness to stand by the Armenian man at the hardest times, to fight and to fall for freedom and honor.

The natural continuation and apparent proof of the heroic character of the Armenian fedayi woman was the fight of the Armenian women in the hot spots of the battles against the Azeri invaders during the Artsakh heroic war. Great many generations have been brought up on the example of their heroism.

---

[19] *1988-1994 թթ. Արցախյան հերոսամարտը դարձյալ մեկ անգամ ապացուցում է մեր ասածը, որ հայ կինը ազգի համար օրհասական պահերին միշտ պատրաստ է դառնալ հայրենիքի համար պայքարող զինվոր: Շատ հայուհի-ազատամարտիկներ, ֆիդայուհիներ մասնակցեցին ադրբեջանական նվաճողների դեմ ծավալված ազգային-ազատագրական արցախյան պայքարին, որտեղ նրանցից շատերը դարձան նահատակներ և անմահացան: Հայուհու հերոսացումը շարունակվում է նաև մեր օրերում:*